



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2018 թվականի N 404-Ա

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔ  
ԵՎ ԵՐԹ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երկիր Ծիրանի» կուսակցության ժողովի անդամ Արամ Ենոքյանի կողմից ներկայացրած իրազեկումը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ղազարյանի 2018 թվականի մարտի 23-ի թիվ 57/4-1138 գրությունը՝ հանրային հավաքի և երթի անցկացման վերաբերյալ դրական կարծիքով, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 20-22-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

1. «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից 2018 թվականի ապրիլի 19-ին և ապրիլի 20-ին՝ ժամը 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային հավաքի և երթի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունելի գիտություն:

2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա.ՕՀԱՆՅԱՆ